## Լրացուցիչ տեղեկություն

DPSS ծառայություններին վերաբերվող լրացուցիչ տեղեկությունների համար, խնդրում ենք այցելել մեր կայքը՝

**dpss.lacounty.gov**

Նպաստների դիմելու համար այցելեք՝ **BenefitsCal.com**

BenefitsCal

## Ներկայացնել բողոք

Եթե կարծում եք, որ չեք ստացել ձեզ անհրաժեշտ օգնությունը, կարող եք բողոք ներկայացնել: Դուք կարող եք նաև բողոք ներկայացնել, եթե կարծում եք, որ խտրականության եք ենթարկվել հաշմանդամության պատճառով:

Դուք կարող եք բողոք ներկայացնել անձամբ, գրավոր (փոստով կամ էլ փոստով) կամ հեռախոսով


Civil Rights Section

12860 Crossroads Parkway South

City of Industry, CA 91746

Phone: (844) 586-5550

TTY: (877) 735-2929

ADAHelp@dpss.lacounty.gov


Լոս Անջելեսի մարզի Սոցիալական Ծառայությունների Վարչություն (DPSS)

# Արդյո՞ք Ունեք Օգնության Կարիք

# Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները

# Ամեն հաշմանդամություն չէ, որ տեսանելի է

## Ունե՞ք օգնության կարիք, հաշմանդամության պատճառով

Օրենքը պաշտպանում է ֆիզիկական, մտավոր և զարգացման հաշմանդամություն, ինչպես նաև առողջական լուրջ խնդիրներ ունեցող այլ մարդկանց:

Ունե՞ք հաշմանդամություն, որը դժվարեցնում է ձեր նպաստների համար դիմելը կամ ծրագրի պահանջները բավարարելը: Մենք կարող ենք ձեզ լրացուցիչ օգնություն տրամադրել: Դուք կարիք չունեք ներկայացնել ձեր բժշկական փաստաթղթերը/ձեր վիճակի ապացույցը:

Մենք կարող ենք ձեզ օգնել.

- Կարդալ մեր փաստաթղթերը և հարցաթերթերը
- Լրացնել մեր հարցաթերթերը
- Ձեռք բերել մեզ անհրաժեշտ փաստաթղթերը
- Ծանոթանալ ծրագրի և աշխատանքային պահանջների փոփոխություններին
- Նշանակել ժամադրություններ
- Այլ ողջամիտ հարմարեցումներով

## Հաշմանդամություն կարող է համարվել սահմանափակումը, որը կապված է.

- Քայլելու, նստելու կամ կանգնելու
- Կարդալու, սովորելու կամ հասկանալու
- Խոսելու, լսելու կամ տեսնելու
- Բազմությամբ շրջապատված լինելու
- Հիշողության կորստի
- Զգացմունքները հաղթահարելու հետ

## Պահանջել ողջամիտ հարմարեցում

Պահանջելու համար ողջամիտ հարմարեցում, կարող եք.

1. Դիմել ցանկացած DPSS-ի աշխատողի կամ
2. Զանգահարել ADA թեժ գիծ՝ (844) 586-5550, կամ
3. Զանգահարել Հաճախորդների սպասարկման կենտրոն՝ (866) 613-3777 հեռախոսահամարով
   - երկուշաբթիից մինչև ուրբաթ առավոտյան ժամը 7:30-ից մինչև երեկոյան ժամը 6:30

   Խոսքի կամ լսողության խանգարումներ ունեցող մարդիկ կարող են օգտագործել TTY՝ (877) 735-2929 (Կալիֆոռնիայի Փոխանցում):
4. Պահանջել հարմարեցում գրավոր, հետևյալ փոստային հասցեով՝

   DPSS ADA Title II Coordinato
   12860 Crossroads Parkway South
   City of Industry, CA 91746

   **կամ ֆաքսով՝** (562) 692-2240

   **կամ էլ. փոստով՝**

   ADAHelp@dpss.lacounty.gov

   Մեծ մասամբ հարմարեցումները կտրամադրվեն պահանջի դեպքում, սակայն որոշների գնահատման և հաստատման համար կարող է պահանջվել մինչև հինգ (5) աշխատանքային օր: